

զատ, ուրիշ շատ ախտանիշներ ալ ունին որոնք անմիջապէս հիւանդներուն ուշադրութիւնը կը գրաւեն յոգնութենէն առաջ ու առիթը չեն տար «ուժի դեղ» խնդրելու:

Կան նմանապէս ջղային, մտային հիւանդութիւններ, որոնք կուտան յոգնածութիւն: Անոնց շարքը շատ երկայն է: Անոնցմով չենք կրնար զբաղիլ: Այդ հիւանդութիւններէն վարակուած հայեր մեզմէ «ուժի դեղ» չեն պահանջած դեռ: Անոնց պարազան տարրեր է:

Հիմա կը յուսամ թէ այն հիւանդները որոնք կարգացին այս յօդուածը, պիտի դան մեղի պատմել իրենց զգացածները ու ոչ թէ մեզմէ ուղեն, առանց քննութեան՝ դեղ: Այն ատեն միայն մենք պիտի կարենանք իրենց ցաւերուն դարմանումը գտնել և տալ «ուժի դեղ»-ը, եթէ պէտք է:

ԲԺ. Գ. ՔՕԼՕԼԵԱՆ

ԼԱՐԼ ԹԷ ԽՆԴԱԼ

Երիտասարդ մը հիւանդանոցէն դժգոհ՝ տուն վերադարձած է: Կը հարցնեմ պատճառը:

— Բնաւ խնամք չեն տանիր. երկու շաբաթ կեցայ, բժիշկը երեք անգամ քովս չեկաւ:

Կը քննեմ. հիւանդութեան բուժումը աւելի ժամանակի խնդիր է, քան դեղի: Այսուհանդերձ կ'ըսեմ.

— Քանի մը օր շարունակ պէտք է այցելեմ, հիւանդութեանդ ընթացքին հետեւելու համար:

— Ամէն օր գալերնիդ անհրաժեշտ է, սօքթօր...

Բաւական լաւ հագուած ֆրանսացի գործաւորուհի մը իր 13 տարեկան աղջկան հետ, որու դէմքը և մազամորթը ցատկաւորով (impetigo) ծածկուած է: Բիւրաւոր անիծներ աղջկան մազերուն վրայ շարուած են: Մօրը ցոյց կուտամ հիւանդութեան իսկական պատճառը:

— Երեք ամիսէ ի վեր ես ալ կը տեսնեմ, պր. բժիշկ, սակայն չուզեցի ոչիւնները փճացնել, որովհետեւ կ'ըսեն թէ այդ կրնայ վնասել պզտիկին առողջութեան...